

Մրցույթ` ՀՀ Արմավիրի մարզի Շահունյանի թ/Ֆ համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր` 2.3-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

07.02.2019

Տիպ` [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու` ՀՀ Արմավիրի մարզի Շահունյանի թ/Ֆ

համայնքապետարան

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության Արմավիրի մարզի Շահունյանի թ/Ֆ

համայնքապետարանը հայտարարում է մրցույթ

համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի

(ծածկագիր` 2.3-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը

զբաղեցնելու համար

07.02.2019թ.

Հայտատու` Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Շահունյանի թ/Ֆ համայնքապետարան

<<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի

Հանրապետության օրենքի 14-րդ հոդված

Գլխավոր մասնագետը`

• կատարում է քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով.

• իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի , ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություն է ներկայացնում աշխատակազմի քարտուղարին.

• աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, վճարման, փաստաթղթերի կազմման, ներկայացման, հաշվետվությունների ստուգման, ամփոփման և ներկայացման աշխատանքները.

• կազմակերպում է համայնքի գնումների անցկացման գործընթացը, կազմում է գնումների տարեկան պլանը.

• կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխությունները, ապահովում է համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը.

• աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ , հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ` իր ոլորտի հետ կապված հարցերի

նախագծերի նախապատրաստման համար.

- աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրենքով սահմանված կարգով վերահսկում է հողի հարկի և գույքահարկի , տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքները, առաջարկություն է ներկայացնում քարտուղարին հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ.
- սահմանված կարգով իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների քննարկումը և արդյունքները ներկայացնում քարտուղարին.
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ :

Գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ :

Գլխավոր մասնագետի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ`

ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ :

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի, << Տեղական ինքնակառավարման մասին>>, << Համայնքային ծառայության մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Նվազագույն աշխատավարձի մասին >>, <<Գանձապետական համակարգի մասին>> , <<Գույքահարկի մա-սին >>, <<Դրամարկղային գործառնությունների մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>> , <<Հողի հարկի մասին>>, <<Պարտադիր սոցիալական վճարումների մասին>> , <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի

ինացություն , ինչպես նաև տրամաբանելու , տարբեր
իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն :

գ) Համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով
աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն
հետևյալ փաստաթղթերը.

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է
դիմումը ներկայացնելիս).
- համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ
պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական
գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը
ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող
փաստաթղթերի կրկնօրինակները բնօրինակների հետ՝ դիպլոմ,
վկայական (ներ) աշխատանքային գրքույկ (վերջինիս բացակայության
դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան
մարմնից) : Ներկայացվող փաստաթղթերի պատճենները ետ չեն
վերադարձվում.
- հայտարարություն այն մասին , որ ինքը դատական կարգով չի
ձանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի
Հանրապետության կառավարության ` 2011 թվականի դեկտեմբերի
15-ի N 1801- Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված
հիվանդություններից որևէ մեկով.
- արական սեռի անձինք՝ զինգրքույկ կամ դրան փոխարինող
ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման վկայականի
կրկնօրինակը կամ համապատասխան տեղեկանք՝ <<Համայնքային
ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-
րդ հոդվածի
<<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով .
- մեկ լուսանկար 3x4 չափսի.
- անձնագիր :

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել
անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են Շահունյանի թ/ֆ
համայնքապետարանում և Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր ժամը
10:00 -15:00 ` բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ
ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին

Ծանոթանալու համար կարող են դիմել Շահումյանի թ/ֆ
համայնքապետարանի աշխատակազմ (գ. Շահումյանի թ/ֆ , հեռ. 044
84 08 08) և Արմավիրի մազպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով
վարչություն (ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237- 2-16-291) :
Մրցույթը կկայանա 2019 թվականի մարտի 11-ին, ժամը 15:00-ին`
Շահումյանի թ/ֆ համայնքապետարանում:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019 թվականի
փետրվարի 25-ը:

Հասցե` Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ
Շահումյանի թ/ֆ
4-րդ փողոց ,1-ին փակուղի 1

Հասցե` Արմավիր մարզ գ. Շահումյան թ/ֆ 4-րդ փողոց,1-ին փակուղի 1
Հեռ..` +374 44 84 08 08
Էլ. փոստ` shahumyantf.armavir@mta.gov.am